



ՀՀ Արարատի մարզի Լանջազատ /Զովաշեն/
Հեռ. (ԹԵՎ) 091-58-28-87

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՁԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ
ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

2018 թվականի հունվարի 10 – ին Լանջազատի գյուղական համայնքում տեղի ունեցավ համայնքի լսում:

Նախագահում էր համայնքի ղեկավար Հ. Հակոբջանյանը, քարտուղարում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա. Մելքոնյանը:

Մասնակցում էին Արարատի մարզպետարանի ներկայացուցիչ Հ. Դանիելյանը, ավագանու անդամներ ի համայնքապետարանի աշխատակազմը, մշակույթի տան, գրադարանի աշխատակիցները, համայնքի ընտանեկան բուժքույրը, հանրակրթական դպրոցի տնօրենը, ինչպես նաև համայնքի բնակիչները:

ԼՍԵՑԻՆ – Արարատի մարզի Լանջազատ համայնքի ղեկավար Հ. Հակոբջանյանի հաշվետվությունը 2017 թ. երկրորդ կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ԱՐԶԱՆԱԳՐՎԵՑ, որ

2017թ. երկրորդ կիսամյակի ընթացքում Լանջազատի գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Համայնքապետի և ավագանու անդամների կողմից արձանագրվել է 412 ընդունելություն: Ընդունելությունների ընթացքում բարձրացված խնդիրները քննարկվել են համայնքի համայնքապետարանի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ:

Համայնքապետարանը բնակիչներին տրամադրել է շուրջ 196 տեղեկանք, ստացել 108 - ից ավել պաշտոնական մամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, դրանք քննարկվել են սահմանված ժամկետներում, տրվել պատասխաններ:

2017թ. երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի վարչական տարածքում պարբերաբար իրականացվել են սանմաքրման աշխատանքներ, մաքրվել են ոռոգման ջրատարները, փոխվել են համայնքի տարածքում գտնվող ցեբեկային լուսավորության լամպերը (մասնակի):

Ամիսը 4 անգամ կատարվում է աղբահանություն:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման, սահմանների ճշտորման և հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ:

Համայնքի ղեկավարի աջակցությամբ ընթացքի մեջ է համայնքի բնակիչներին թունաքիմիկատներով, և սերմերով ապահովելու հարցը:
2017թ. երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա / հողի հարկ՝ 1655.7 հազար դրամ.

բ / գույքահարկ որից՝ շենք և շինություններ – 262.1 հազար դրամ, ավտոմեքենաներ – 2572.0 հազար դրամ

գ / տեղական տուրք՝ 54.0 հազար դրամ

դ / ոչ հարկային եկամուտներ՝ 152.0 հազար դրամ

Համայնքում իրականացվել է մի շարք միջոցառումներ.

Հուլիսին կազմակերպվեց հանրային լուսմներ Խոսրովի արգելոցի կարգավիճակի վերբերյալ, որից հետո եղավ հյուրասիրություն :

Հանդիսավորությամբ նշվել է սեպտեմբերի 21 – ը՝ անկախության օրը , նշվել է նաև ուսուցչի օրը : Սեպտեմբերի 1-ին համայնքի 1 – ին դասարան հաճախող երեխաներին համայնքապետարանի կողմից տրամադրվել է նվերներ : Գեղեցիկ միջոցառումների շարք է կազմակերպվել երեխաների համար Նոր տարվա կապակցությամբ : Ամանորի միջոցառման ժամանակ երեխաներին բաժանվել են նվերներ, հրավիրված են եղել նաև լրագրողներ միջոցառումները լուսաբանելու համար:

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 1870.0 հազար դրամ ֆինանսական աջակցություն:

Հուղարկավորության նպաստ՝ 140.0 հազար դրամ

Համայնքում նախադպրոցական դաստիարակությունը պատշաճ կազմակերպելու համար հատկացվել է 466.0 հազար դրամ, արտադպրոցական դաստիարակության համար (Արևշատի երաժշտական դպրոց) 100.0 հազար դրամ:

Աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է 1322.4 հազար դրամ.

2018թ 1- ին կիսամյակում նախատեսված է Լանջազատ համայնքի Ն. Աղբալյան, Գ. Նժդեհի փողոցների խճապատում և ցերեկային լուսավորության անցկացում , Նազարաձոր կոչվող տարածքի փողոցի խճապատում, ինչպես նաև խմելու և ոռոգման ջրի ցանցերի վերանորոգում և ջրատարերի մաքրում: Լանջազատ համայնքում 2018 թ. հունվարի 28 – ին նշվելու է Հայկական Բանակի օրը: Հրավիրվածների մեջ լինելու են համայնքի զիժառայողների ծնողներ, հարազատներ և Արտաշատի ԶԿ ներկայացուցիչը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Հ. ՀԱԿՈՔՉԱՆՅԱՆ